15 դեկտեմբերի 2011 թվականի N 1762 -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 31-Ի N 730-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մայիսի 31-ի <<Ծերերի և հաշմանդամների խնամքի և սոցիալական սպասարկման նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին>> N 730-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման N 5 հավելվածում՝

ա. 1-ին կետի 4-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<4) <<Դ>> ենթախումբ՝ հիմնականում կարիք ունի սոցիալ-հոգեբանական օգնության>>,

բ. 4-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<2) բժշկական օգնություն և սպասարկում, որը ներառում է բժշկի այցելություն՝ ոչ պակաս, քան ամիսը մեկ անգամ՝ հաստատված ժամանակացույցի համաձայն և ըստ անհրաժեշտության, ինչպես նաև բուժքրոջ այցելություն ամիսը մեկ անգամ և բժշկի ցուցումով՝ ըստ անհրաժեշտության.>>,

գ. 4-րդ կետի 3-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<3) սոցիալ-հոգեբանական օգնություն, որը ներառում է հոգեբանի այցելություն ըստ ներկայացված հայտի և սոցիալական աշխատողի այցելություն ոչ պակաս, քան ամիսը մեկ անգամ և ըստ անհրաժեշտության>>,

դ. 6-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<2) բժշկական օգնություն և սպասարկում, որը ներառում է բժշկի այցելություն՝ ոչ պակաս, քան ամիսը մեկ անգամ՝ հաստատված ժամանակացույցի համաձայն և ըստ անհրաժեշտության, ինչպես նաև բուժքրոջ այցելություն ամիսը մեկ անգամ և բժշկի ցուցումով՝ ըստ անհրաժեշտության>>,

ե. 6-րդ կետի 3-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<3) սոցիալ-հոգեբանական օգնություն, որը ներառում է հոգեբանի այցելություն ըստ ներկայացված հայտի և սոցիալական աշխատողի այցելություն ոչ պակաս, քան ամիսը մեկ անգամ և ըստ անհրաժեշտության>>,

զ. 8-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<2) բժշկական օգնություն և սպասարկում, որը ներառում է բժշկի այցելություն՝ ոչ պակաս, քան ամիսը մեկ անգամ՝ հաստատված ժամանակացույցի համաձայն և ըստ անհրաժեշտության, ինչպես նաև բուժքրոջ այցելություն ամիսը մեկ անգամ՝ բժշկի ցուցումով և ըստ անհրաժեշտության>>,

է. 8-րդ կետի 3-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<3) սոցիալ-հոգեբանական օգնություն, որը ներառում է հոգեբանի այցելություն ըստ ներկայացված հայտի և սոցիալական աշխատողի այցելություն ոչ պակաս, քան ամիսը մեկ անգամ և ըստ անհրաժեշտության>>,

ը. 10-րդ կետի 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<1) բժշկական օգնություն և սպասարկում, որը ներառում է կանխարգելման նպատակով բժշկի այցելություն, ոչ պակաս, քան ամիսը մեկ անգամ հաստատված ժամանակացույցի համաձայն և ըստ անհրաժեշտության, ինչպես նաև բուժքրոջ այցելություն ամիսը մեկ անգամ՝ բժշկի ցուցումով ըստ անհրաժեշտության>>,

թ) 10-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<2) սոցիալ-հոգեբանական օգնություն, որը ներառում է հոգեբանի այցելություն ամիսը մեկ անգամ և ըստ անհրաժեշտության, սոցիալական աշխատողի այցելություն ամիսը մեկ անգամ և ըստ անհրաժեշտության>>.

2) որոշման N 8 հավելվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<Հավելված N 8
ՀՀ կառավարության 2007 թվականի
մայիսի 31-ի N 730-Ն որոշման

Ն Վ Ա Ջ Ա Գ ՈՒ Յ Ն Չ Ա Փ Ո Ր Ո Շ Ի Չ Ն Ե Ր

ՏՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԾԵՐ ԵՎ ՀԱՇՄԱՆԴԱՄ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԲԺՇԿԱՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ

<<

NN ը/կ	Պաշտոնի անվանումը	Հաստիքային միավորը	Հաստիքային միավորի սահմանման չափանիշը՝ ըստ հաճախորդների թվի
1.	Սոցիալական աշխատող	1	յուրաքանչյուր 120 հաճախորդի հաշվարկով
2.	Հոգեբան	1	յուրաքանչյուր 200 հաճախորդի հաշվարկով
3.	Իրավախորհրդատու	1	յուրաքանչյուր 700 հաճախորդի հաշվարկով
4.	Բժիշկ	1	յուրաքանչյուր 150 հաճախորդի հաշվարկով
5.	Բուժքույր	1	յուրաքանչյուր 120 հաճախորդի հաշվարկով
6.	Սոցիալական սպասարկող	1	յուրաքանչյուր 15 հաճախորդի հաշվարկով
7.	Խմբավար	1	յուրաքանչյուր 120 հաճախորդի հաշվարկով կամ մեկ աշխատախմբի հաշվարկով

>>.

3) որոշման N 9 հավելվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<< Հավելված N 9
ՀՀ կառավարության 2007 թվականի
մայիսի 31-ի N 730-Ն որոշման

Ն Վ Ա Ձ Ա Գ ՈՒ Յ Ն Չ Ա Փ Ո Ր Ո Շ Ի Չ Ն Ե Ր
ՍՈՑԻԱԼ-ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ՑԵՐԵԿԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԲԺՇԿԱՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ

<<

NN ը/կ	Պաշտոնի անվանումը	Հաստիքային միավորը	Հաստիքային միավորի սահմանման չափանիշը՝ ըստ հաճախորդների թվի
1.	Սոցիալական աշխատող	1	յուրաքանչյուր 50 հաճախորդի հաշվարկով
2.	Հոգեբան	1	յուրաքանչյուր 100 հաճախորդի հաշվարկով
3.	Բժիշկ (թերապևտ)	1	յուրաքանչյուր 200 հաճախորդի հաշվարկով
4.	Բուժքույր	1	յուրաքանչյուր 50 հաճախորդի հաշվարկով
5.	Խմբավար	1	յուրաքանչյուր 50 հաճախորդի հաշվարկով
6.	Էրգոթերապևտ կամ արտթերապևտ	1	յուրաքանչյուր 50 հաճախորդի հաշվարկով

>>:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

2011 թ. դեկտեմբերի
Երևան